[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
9	Նոյեմբեր	2018 թ.		U	4161021197
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
9	Նոյեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի		
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3	
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը		
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[19] Լրացուցիչ տվյալներ		
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծավալաբանական ցուցանիշը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	37152518 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող՝
դիրքորոշում ստորագրություն (անուն, ազգանուն)
դիրքորոշում ստորագրություն (անուն, ազգանուն)

09/11/2018 13:00:00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

05 հունիսի, 2018թ. ք. Եղեգնաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության մայոր Ա. Գևորգյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 37152518 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. մայիսի 15-ին՝ ժամը 16:30-ին, Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակչուհի Լուսիկ Խաչիկի Մնացականյանը հաղորդում է տվել ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժին այն մասին, որ 2018թ. մայիսի 13-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Աղավնաձորի իրենց առանձնատանն ամուսինը՝ Տիգրան Կավկազի Նիկոլյանը, ձեռքերով 10-15 անգամ հարվածել է մարմնի տարբեր մասերին՝ ձախ ձեռքի, ձախ այտի և աչքերի շրջանում պատճառելով մարմնական վնասվածք:

2018թ. մայիսի 21-ին ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում հարուցվել է թիվ 37152518 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: 2018թ. մայիսի 22-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչություն՝ քրեական գործի հետագա ընթացքը լուծելու համար, այն ընդունվել է վարույթ:

2018թ. մայիսի 22-ին վարչության պետի հանձնարարությամբ հետագա նախաքննության կատարման համար վարույթ է ընդունվել թիվ 37101218 քրեական գործը:

Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2018թ. մայիսի 19-ին՝ ժամը 21:05-ին, <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից ոստիկանության Եղեգնաձորի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ անգիտակից վիճակում իրենց մոտ է տեղափոխվել Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակչուհի, 28.01.1971թ. ծնված Լուսիկ Խաչիկի Մնացականյանը:

Ահազանգի հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Լուսիկ Խաչիկի Մնացականյանը նույն օրը դեռևս չպարզված հանգամանքներում կյանքին վերջ տալու նպատակով իրենց տանը թունաքիմիկատ է խմել, ինչի հետևանքով ժամը 18:30-ի սահմաններում նրա ինքնազգացողությունը վատացել է, տեղափոխվել է <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, որտեղ գիտակցության չգալով նույն օրը ժամը 21:55-ին մահացել է:

Ըստ դատաբժշկական փորձագետ Ա. Դադաշյանի հայտարարության՝ Լուսիկ Մնացականյանը մահացել է թունավորման հետևանքով:

Դեպքի առթիվ 2018թ. մայիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 37101218 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով:

2018թ. մայիսի 23-ին թիվ 37101218 քրեական գործը միացվել է թիվ 37152518 քրեական գործին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Լուսիկ Մնացականյանը 1994թ. ամուսնացել է Աղավնաձոր գյուղի բնակիչ Տիգրան Նիկոլյանի հետ, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երեք որդի: Ավագ որդին՝ Գևորգ Նիկոլյանն, ուսանող է, սովորում է Էրեբունու բժշկական քոլեջում, միջնեկ որդին՝ Գրիգոր Նիկոլյանը, 2018թ. սկզբին է զորացրվել բանակից, օրավարձով դաշտային գործեր է կատարել գյուղում, կրտսեր որդին՝ Ալեն Նիկոլյանը, 16 տարեկան է, չի աշխատում: Տիգրան Նիկոլյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, բուժումներ է ստացել Երևանի Նորքի հիվանդանոցում, վերջինիս հիվանդ լինելու մասին Լուսիկ Մնացականյանը մինչև ամուսնանալը չի իմացել: Ամուսնության սկզբնական ժամանակահատվածից Լուսիկ Մնացականյանի ընտանեկան կյանքը եղել է դժվար, Տիգրան Նիկոլյանը հաճախակի է ծեծել նրան, բայց մինչ վերջինիս ծնողների մահը նրանց ընտանեկան վիճակն իրավիճակն այնքան սուր չի եղել, որքան նրանց մահից հետո, Տիգրան Նիկոլյանի մայրը մահացել է 2017թ. օգոստոս ամսին, որից հետո Լուսիկը գրեթե ամեն օր վատ վերաբերմունքի և ծեծի է ենթարկվել ամուսնու կողմից: Լուսիկը մշտապես սեզոնային անհատական վճարովի աշխատանքներ է կատարել դաշտերում, ընտանիքը պահել է ինքն, հոգացել որդու ուսման ծախսերը, ամուսինը չի աշխատել: Լուսիկ Մնացականյանի հարաբերությունները հարթ չեն եղել նաև որդիների հետ, ուստի մահվան նախորդող ժամանակահատվածում Լուսիկ Մնացականյանը անընդհատ ասել է, որ էլ չի դիմանում, ամեն օր իրենց տանը վեճ է ու կռիվ, նա հատկապես շեշտել է ամուսնու և որդիներից Գրիգորի անունը, ասել է, որ նրա պատճառով է շատ հաճախ կռիվներ լինում իրենց տանը, շատ ագրեսիվ են:

2018թ. մայիսի 13-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, հերթական անգամ աշխատանքի վերադառնալուց հետո Տիգրան Նիկոլյանը Լուսիկ Մնացականյանից ծխախոտի գումար է ուզել, սակայն Լուսիկ Մնացականյանն ասել է, որ գումար չունի, որից հետո Տիգրան Նիկոլյանը ծեծի է ենթարկել նրան, ձեռքերով 10-15 անգամ հարվածելով վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք՝ ձախ ստորին կոպի շրջանի արյունազեղման, քերծվածքի, աջ ակնակապճային, կրծքավանդակի, աջ բազկի վերին երրորդականի, ձախ բազկի միջին երրորդականի, ձախ ազդրի շրջանների արյունազեղման ձևով: Լուսիկ Մնացականյանը փախել է տանից, գնացել է հարևանի տուն, որտեղից էլ եկել է Եղեգնաձոր քաղաքի իր բարեկամների տուն, 2018թ. մայիսի 15-ին հաղորդում է տվել ոստիկանության Եղեգնաձորի բաժնում, նշել, որ չի հաշտվում ամուսնու հետ:

2018թ. մայիսի 16-ին Լուսիկ Մնացականյանը գնացել է քաղաք Երևան որդու մոտ, որպեսզի աշխատանք գտնի և մնա այնտեղ, սակայն որդին նրան հորդորել է վերադառնալ գյուղ, հաշտվել հոր հետ և ապրել այնտեղ, նրա հետևից Երևան քաղաք գնացած Տիգրան Նիկոլյանն ու Ալեն Նիկոլյանը նրան համոզել են վերադառնալ գյուղ, 2018թ. մայիսի 18-ին Լուսիկ Մնացականյանը վերադարձել է գյուղ, 2018թ. մայիսի 19-ին եղել է տանը, անտրամադիր վիճակում, անընդհատ լացել է, իսկ որդու այն հարցին, թե ինչու է լացում, նշել է, որ իր քրոջ մահացած որդուն է հիշել: Նույն օրը՝ ժամը 18-ի սահմաններում, Լուսիկ Մնացականյանը կանչել է որդուն՝ Ալեն Նիկոլյանին, ասել, որ ցանկանում է հրաժեշտ տալ նրան քանի որ մինչև հաջորդ օրը չի ապրելու, կարճ ժամանակ անց սկսել է ցնցվել, զանգահարել են շտապ օգնություն, ժամանած շտապ օգնության անձնակազմը Լուսիկ Մնացականյանին տեղափոխել է <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>>, որտեղ գիտակցության չգալով նույն օրը ժամը 21:55-ին մահացել է:

2018թ. մայիսի 24-ին որոշում է կայացվել Տիգրան Նիկոլյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ անձնական հարցերի շուրջ կնոջ՝ Լուսիկ Խաչիկի Մնացականյանի հետ պարբերաբար ունեցած վիճաբանությունների ընթացքում վերջինիս տվել է նրա նկատմամբ բռնություն գործադրելու ենթարկելու սպառնալիքներ, դաժան վերաբերմունք դրսևորելով նրա նկատմամբ պարբերաբար ենթարկել է ծեծի, այդ թվում 2018թ. մայիսի 13-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Աղավնաձորի իրենց առանձնատանն անձնական հարցերի շուրջ կնոջ՝ Լուսիկ Խաչիկի Մնացականյանի հետ ունեցած վիճաբանության ընթացքում՝ ձեռքերով 10-15 անգամ հարվածելով վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք՝ ձախ ստորին կոպի շրջանի արյունազեղման, քերծվածքի, աջ ակնակապճային, կրծքավանդակի, աջ բազկի վերին երրորդականի, ձախ բազկի միջին երրորդականի, ձախ ազդրի շրջանների արյունազեղման ձևով, ինչի արդյունքում անուղղակի դիտավորությամբ Լուսիկ Մնացականյանին հասցրել է ինքնասպանության:

Առաջադրված մեղադրանքում Տիգրան Նիկոլյանն իրեն մեղավոր չի ճանաչել, հրաժարվել է ցուցմունք տալուց:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Տիգրան Կավկազի Նիկոլյանը <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ հոգեբուժական կաբինետում հաշվառված է <<Թերև աստիճանի մտավոր հետամնացություն վարքային խանգարումներով>> ախտորոշմամբ:

Դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում Լուսիկ Մնացականյանը բացատրություն է տվել այն մասին, որ ամուսինը ծեծի է ենթարկել իրեն՝ ծխախոտ գնելու համար նրան գումար չտալու պատճառով:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Լուսիկ Մնացականյանի որդին՝ Ալեն Սիմենյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ հայրը հոգեկան հիվանդություն ունի, նա բնավորությամբ ագրեսիվ մարդ է, միշտ կռվում է իրենց հետ, մայրիկին շատ անգամ է ծեծել, բայց ինքը միշտ մեջ է ընկել, պաշտպանել նրան: Եղել են դեպքեր, որ նրան ծեծելու ժամանակ ինքը մորը փախցրել է հարևան Անահիտի տուն, որ հանկարծ լուրջ վնաս չտա: Վերջին անգամ հայրը ծեծել է մորը 2018թ. մայիսի 13-ին իրենց տան երկրորդ հարկում, հարվածել է 4-5 անգամ բռունցքով նրա դեմքին, որի ինքը բաժանել է նրանց, ապա նույն օրը մորը տեղափոխել է նրա քեռու տուն՝ Եղեգնաձոր և նա մնաց այնտեղ: Այդ օրը հայրն իրեն ասել է, որ ինքն իրեն կախաղան է հանելու, իսկ մայրը թույն է խմելու մեռնի: Դա իր համար եղել է սովորական երևույթ, քանի որ այդ արտահայտությունը հայրը շատ է արել, ինքը մշշտ մորն է պաշտպանել, իսկ եղբայրները՝ հորը: Բոլոր կռիվների ժամանակ հայրը մորը սպառնացել է, որ կմորթի նրան, նա միայն ձեռքով է նրան հարվածել, բայց հաճախակի ձեռքը փայտ վերցնելով՝ վախեցրել է, որ կսպանի: Ինքն ու մայրը միշտ վախեցել են հորից, վերջին ծեծի օրը հայրը մորը ծեծել է նախ գոմում ճտերին կերակրելու ժամանակ, դրանից հետո նոր տան երկրորդ հարկում, այդ ժամանակ ինքը լսել է, որ հայրն ասել է մորը <<տեղերքդ տունը չեն, նաղդի քեզ կմորթեմ>>, հոր ձեռքին այդ ժամանակ տեսել է կով մորթելու համար օգտագործված մեծ դանակ, նա մորն ասել է. <<քեզ կմորթեմ Լամարի ճամփով կգնաս>>: Լամարը հարևաններից է եղել, ում սպանել է նրա ամուսինը մոտ 7-8 տարի առաջ: Վերջին ծեծի օրը մորը բերել է նրա քեռու տուն, մոտ 4-5 օր նա մնացել է այնտեղդ, ոանից հետո նա գնացել է Երևան բուժման, հոր առաջարկով վերջինիս հետ գնացել են Երևան՝ մորը տուն բերելու համար ու միասին երեքով մայիսի 18-ին վերադարձել են Աղավնաձոր գյուղ: 2018թ. մայիսի 19-ին տանը վիճաբանություն չի եղել, սակայն մայրը եղել է անտրամադիր և լացել է, նա եղել է տանը, հայրն էլ գնացել է մեր տնից մոտ 50-60 մետր ցած մեր հողամասում ջուր անելու, ինքն էլ է դուրս եկել բակ: Ժամը 18:30-ի սահմաններում լսել է մոր ձայնը, անմիջապես գնացել է նրա մոտ, նա բազկաթոռին նստած է եղել, լաց լինելով իրեն ասել է, ուզում է հրաժեշտ տալ, որովհետև մահանում է, մինչև հաջորդ օրն էլ սաղ չի լինի: Ինքը նրան ասել է՝ դու քո մահով մահացի, մեր համար խնդիրներ մի ստեղծի: Չնայած տանից թունաքիմիկատի հոտ է զգացելսակայն չի մտածել, որ մայրս կարող է թույն խմած լինել, բայց երբ նա սկսել է դողացնել, բերանից փրփուր է եկել, ինքը կանչել է հորը, վերջինս ասել է, որ կարողա մահանա, զանգի շտապ օգնություն: Ժամանած շտապ օգնության անձնակազմը մորը տեղափոխել է Եղեգնաձորի հիվանդանոց, այնտեղ շարունակել են օգնություն ցույց տալ, բայց նա չի փրկվել: Մայրը հոր մեղքով է հոգնել կյանքից, հավանաբար ինչ որ թույն է խմել:

Լուսիկ Մնացականյանի քույրը՝ Լաուրա Գրիգորյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ քույրն Աղավնաձոր գյուղի բնակիչ Տիգրան Նիկոլյանի հետ ամուսնացել է 1994թ., Տիգրանն ունեցել է հոգեկան խնդիրներ, որոնց մասին մինչ ամուսնանալը քույրը չի իմացել, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երեք որդի: Ամուսնության հենց սկզբից էլ Լուսիկի

ընտանեկան կյանքը եղել է դժվար, ամուսինը ծեծել է նրան, բայց մինչ նրա սկեսրոջ և սկեսրայրի մահը իրավիճակն այնքան սուր չի եղել, որքան նրանց մահից հետո, նրա սկեսուրը մահացել է 2017թ. օգոստոս ամսին, որից հետո Լուսիկը գրեթե ամեն օր վատ վերաբերմունքի և ծեծի է ենթարկվել ամուսնու կողմից: Լուսիկն անհատական վճարովի աշխատանքներ է կատարել դաշտերում, ընտանիքը պահել է ինքն, ամուսինը չի աշխատել, նա է հոգացել որդու ուսման ծախսերը: Չնայած նրա այդ տանջանքին՝ նրա ընտանիքի անդամները, այդ թվում և որդիները չեն գնահատել, բացի ամուսնուց, քրոջը վատ վերաբերմունքի են արժանացրել հենց իր զավակները, նրանք անտեսել են իրենց մորը, վատ են վերաբերվել նրան: Լուսիկին ամուսինը ծեծել է առանց պատճառի կամ չնչին պատճառներից, հատկապես վերջին շրջանում քույրն անընդհատ ասել է, որ էլ չի դիմանում, ամեն օր իրենց տանը վեճ է ու կռիվ, նա հատկապես շեշտել է ամուսնու և որդիներից Գրիգորի անունը, ասել է, որ նրա պատճառով է շատ հաճախ կռիվներ լինում իրենց տանը, նա շատ ագրեսիվ է, Լուսիկի հոգեբանական վիճակը շատ ծանր է եղել: 2018թ. մայիսի 14-ին իրեն զանգահարել է Լուսիկը և լացելով պատմել է, որ ամուսինը կրկին իրեն դաժանորեն ծեծել է, հազիվ է փախել, գնացել է Եղեգնաձոր՝ իրենց քեռու տուն: Նա եղել է շատ վատ վիճակում, պատմել է, որ ջանը տնքում է, ցավերին չի դիմանում, գրիժային է խփել: Նա այդ ընթացքում անընդհատ զանգահարել է իրեն, ասել է, որ ինքը վախենում է վերադառնալ տուն, ասել է, որ պետք է բաժանվի, եթե հետ գնա, իրեն կսպանեն, չի ուզում գնա, բայց իրեն տանում են, խոսքը վերաբերվել է տղաներին և ամուսնուն: Նա նաև նշել է, որ որդին՝ Գրիգորն, իրեն ստիպում է, որ հոր վրայից վերցնի ոստիկանություն տված հաղորդումը, բայց ինքը չի ուզում: 2018թ. մայիսի 16-ին Լուսիկը գնացել է քաղաք Երևան որդու՝ Գևորգի մոտ: Ինքն այդ ժամանակ զանգահարել է նրա որդուն՝ Գևորգին, խնդրել, որ մորը տիրություն անի, սակայն նա ագրեսիվ ձևով ասել է, որ ինքը մոր համար ժամանակ չունի, իրեն հետաքրքրում է միայն իր դասերն ու իր կարիերան, իսկ մայրն իրեն խայտառակ է անում, ինքը մտադիր չէ նրան պահել, միաժամանակ ասել է, որ հոր ու մոր խնդիրը մեկ տարվա կամ երկու տարվա խնդիր չէ, այլ 23 տարվա խնդիր, ինքը նրան ասել է, որ չափահաս է, կարող է մի բան անել իր մոր համար, սակայն նա կտրուկ ասել է, որ ինքը ոչինչ չունի անելու, նույն ագրեսիվությամբ ու տրամադրվածությամբ էլ Գևորգը խոսել էր Լուսիկի հետ ու նրան ճանապարհել է Երևանից՝ հորդորել, որ գնա և ապրի հոր հետ, յոլա գնա: 2018թ. մայիսի 18-ին՝ ժամը 13-ի սահմաններում, հեռախոսազրույց է ունեցել Լուսիկի հետ, Լուսիկն ասել է, որ Տիգրանն ու Ալենը եկել են իր հետևից, որ տանեն տուն, բայց ինքը չի ուզում գնա, վախենում է, որ իրեն մի բան կանեն, այդ պահին հեռախոսը վերցրել է Ալենը, դժգոհել, որ Լուսիկը չի ուզում տուն վերադառնալ, նրան համոզում են, որից հետո ինքն անջատել է հետախոսը դա եղել է իրենց վերջին զրույցը, իսկ 2018թ. մայիսի 20-ին առավոտյան տեղեկացել է քրոջ մահվան մասին: Լուսիկ Մնացականյանի մահն իր համար եղել է կանխատեսելի, նա վերջին շրջանում միշտ ասել է, որ վախենում է իր տանեցիներից, որ իրեն կսպանեն, իր մահը նրանց

փրկությունն է լինելու, նա երբեք չի ասել, որ ինքն իր կյանքին վերջ կտա, նման արտահայտություն իր մոտ չի արել, բայց նաև ասել է, որ հոգնել է, չի դիմանում, նրա ամեն ապրած օրը վերջին շրջանում եղել է տանջանք, որը նրան հասցրել է գլխավորապես իր ամուսինը ծեծի ենթարկելով և վատ վերաբերվելով և որդիները՝ նրան չհասկանալով և անտեսելով, նրա աշխատանքն ու արածը չգնահատելով, նրան տանջել է իր տան ընտանեկան մթնոլորտը, նա ամեն օր աշխատել է վաղ առավոտից և պահել նրանց, բայց երբևէ գնահատված չի եղել: Քրոջ մահվան մեջ հավասարապես մեղավոր են նաև նրա տղաները՝ Գևորգը, Գրիգորն ու Ալենը, չնայած որդիները նրան չեն ծեծել, բայց նրան հոգեպես տանջել է նրանց վերահերմունքն իր հանդեպ:

Լուսիկ Մնացականյանի հարևաններն ու համագյուղացիները ցուցմունք են տվել այն մասին, որ վերջինս եղել է շատ բարեխիղճ, աշխատասեր և պարկեշտ անձնավորություն, անխնա աշխատել է իր ընտանիքի հոգսերը հոգալու համար, անհատական օրավարձով աշխատանքներ է կատարել հողատարածքներում, բայց հաճախակի աշխատանքի է գնացել ծեծված և տխուր վիճակում, նրանց ընտանիքը եղել է անհաշտ, ամուսինը հաճախակի է նրան ծեծի ենթարկել:

Լուսիկ Մնացականյանի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, հոգեվիճակը ինքնասպանություն կատարելուց առաջ, այդ հոգեվիճակում գտնվելով պայմանավորված ինքնասպանություն գործելու հանգամանքը, ինչպես նաև ամուսնու՝ քրեական գործով մեղադրյալ Տիգրան Նիկոլյանի կողմից պարբերաբար ծեծի և դաժան վերաբերմունքի արժանացնելով պայմանավորված ինքնասպանություն կատարելու հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 55, 243 – 245 և 248-րդ հոդածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Վարույթումս քննվող թիվ 37152518 քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամին:

2. Փորձագետների պարզաբանմանը առաջադրել հետևյալ հարցը.

- պարզել Լուսիկ Մնացականյանի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, դրանց ներգործությունը նրա վարքի վրա,
- պարզել Լուսիկ Մնացականյանի հոգեվիճակը ինքնասպանություն կատարելուց առաջ, այդ հոգեվիճակում գտնվելով պայմանավորված նրա կողմից ինքնասպանություն գործելու հանգամանքը,
- պարզել, թե գոյություն ունի արդյոք պատճառահետևանքային կապ մեղադրյալ Տիգրան Նիկոլյանի գործողությունների՝ Լուսիկ Մնացականյանին պարբերաբար ծեծի, մարդկային արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու և դաժան վերաբերմունքի ենթարկելու և Լուսիկ Մնացականյանի մահվան նախորդող և ինքնասպանության հասցրած հոգեվիճակի միջև,

- պարզել, թե գոյություն ունի արդյոք պատճառահետևանքային կապ Լուսիկ Մնացականյանի որդիների գործողությունների՝ մորն անտեսելու և մարդկային արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու, և Լուսիկ Մնացականյանի մահվան նախորդող և ինքնասպանության հասցրած հոգեվիճակի միջև

3. Փորձագետին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք սույն որոշման մեջ նշված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, դրանց պարզաբանումը կմտնի փորձագետի իրավասության մեջ, որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետներին պարզաբանել իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և դրա վերաբերյալ ստորագրությունը կցել եզրակացությանը:

Վայոց ձորի մարզային քննչական
վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ **Ա. Գևորգյան**